



Նոր

ՃՐԱԳ



9

Թ.Տարի : Թիւ 2 Եռամսեայ թերթիկ
Ապրիլ 2023

Հրատարակութեամբ

Հ.Մ.Բ.Մ. Այնեղօ Մեկուսի շրջանի վարչութիւն



Հ.Ս.Բ.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միութիւն

Միութիւն

Պատմական

Լրատու

Սկստակական

Մարզական

ՄԱՐԶԻԿ



Տուն / Լրատու / Այսօր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹԻԻ 427 «ՄԱՐԶԻԿ»Ի ԻՆՉ Կ'ԸՆԵՆՔ... (Իրապէ՛ս յաղթելու համար)



«Յաղթելո՛ւ ենք»ը նշանաբան ընտրեցինք 2020-ին, Արցախեան 44-օրեայ պատերազմին համար:

«Յաղթելո՛ւ ենք» գոչեցինք եւ գարուն տարիքի հազարաւոր զինուորականներ ու կամաւորներ պատերազմի դաշտ առաջնորդեցինք՝ արիաբար դէմ դնելու համար ազերի, թուրք ու վարձկան զինեալ ուժերու:

«Յաղթելո՛ւ ենք» յայտարարեցինք աշխարհով մէկ եւ ամբողջական զօրաշարժի ենթարկեցինք համայն հայութիւնը՝ քարոզչական, տեղեկատուական, քաղաքական, դիւանագիտական եւ նիւթական աջակցութիւն ապահովելու համար հերոսական մեր բանակին եւ անոր կողքին մարտնչող մեր ժողովուրդին:

«Յաղթելու ենք»ը դարձաւ առաջնորդող նպատակը մեր խօսքին, մտածումին եւ գործին, մինչեւ որ 9 Նոյեմբեր 2020-ի նուաստացուցիչ օրը, ազգովին մենք մեզ գտանք բոլորովին տխուր իրականութեան մը դէմ յանդիման՝ զինուորապէս պարտուած, քաղաքականապէս անձնատուր եղած եւ բարոյապէս վարկաբեկուած:

Թշնամին հասաւ Միւնիքի եւ Գեղարգունիքի դռները: 10 հազարէ աւելի ընտանիքներ դարձան անօթեւան, մինչ հազարաւոր ուրիշներ գաղթական դարձան իրենց իսկ հայրենիքին մէջ՝ Շուշիէն, Հատրութէն եւ բռնագրաւեալ այլ շրջաններէն տեղափոխուելով Ստեփանակերտ, Երեւան թէ այլուր:

Խոցուեցաւ հայ ժողովուրդին արժանապատուութիւնը, փճացաւ 30 տարուան պայքարին արդիւնքը: Ունեցանք հայաթափուող Արցախ, արտագաղթող Հայաստան: Հասանք հոն, ուր կը կարծէինք երբեք չէինք կրնար հասնիլ՝ նուաստացումի եւ տկարութեան գագաթնակէտր: Հասանք հոն, ուր Երեւանի իշխանութիւնները ճանչցան Ազրայէճանի հողային ամբողջականութիւնը, անտեսելով Արցախի ինքնորոշման իրաւունքը եւ այդ իրաւունքին ձեռք բերման համար 30 տարի ի գործ դրուած համահայկական ճիգն ու ներդրումը:

9 Նոյեմբեր 2020-ի խայտառակ պարտութիւնը հայութիւնը առաջնորդեց յաջորդական նոր պարտութիւններու՝ քաղաքական, դիւանագիտական եւ ռազմական ճակատներու վրայ: Իբրեւ արդիւնք, Բերձորն ու Աղաւնօն յանձնուեցան թշնամիին, Միւնիքի սահմանային բարձունքները գրաւուեցան ազրայէճանական ուժերու կողմէ: Թշնամին Մեպտեմբեր 2022-ին ներխուժեց հայրենի հող, պահանջեց «Չանգեզուրի միջանցքը» փակելով Արցախը Հայաստանին կապող Լաչինի անցքը:

Երբ կը յիշենք այս բոլորը եւ կը փորձենք դասեր քաղել անցնող տարիներու տխուր փորձառութենէն, պատճառ չունինք չկրկնելու 44-օրեայ պատերազմին նշանաբանը՝ «Յաղթելու ենք»ը, սակայն այս անգամ առանց սուտի եւ կեղծիքի:



Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԻԿ

Տուն / Լրատու / Այսօր



Այո՛, «Յաղթելու ենք» ազերի-թուրքին եւ հայության բոլոր թշնամիներուն, բայց անոնցմէ առաջ՝ «Յաղթելու ենք» մենք մեզի՛, մեր յուսահատության, պարտուողականության եւ նահանջականության: «Յաղթելու ենք» անձնատուության եւ պարտուածի հոգեբանության: «Յաղթելու ենք» մեր ցաւին ու դառնութեան, մեր յուսախաբութեան եւ յոռետեսութեան:

Մենք յաղթեցինք Արցախեան 44-օրեայ պատերազմը: Իսկ յաջորդող պատերազմները եւս չպարտուելու համար ի՞նչ ըրինք 9 Նոյեմբեր 2020-էն ետք: Պատասխանը կրնայ տալ 13 Սեպտեմբեր 2022-ի ներխուժումը, ուր դարձեալ կորսնցուցինք հող ու զինուոր: Ունեցանք գերիներ եւ անյայտ կորսուածներ:

Իսկ ի՞նչպէս կը պատրաստուինք յաջորդ պատերազմին: Արդե՞օ՛ք կը պատրաստուինք...: Իսկ եթէ պատերազմի չենք պատրաստուիր, ի՞նչպէս կ'ապրինք մեր առօրեան, որ ինքնին պատերազմ է՝ քաղաքականութեամբ եւ դիւանագիտութեամբ, գիտութեամբ եւ արդիւնաբերութեամբ:

9 Նոյեմբեր 2020-էն ասդին ի՞նչ կ'ընենք անցեալի մեր թերութիւնները սրբագրելու համար: Ի՞նչ կ'ընենք ազգային մեր միաբանութիւնն ու արժանապատուութիւնը վերականգնելու համար: Ի՞նչ կ'ընենք բանակաշինութեան եւ զինուորական ճարտարարուեստի զարգացման համար: Ի՞նչ կ'ընենք Արցախի հզօրացման եւ վերաբնակեցման համար: Ի՞նչ կ'ընենք Հայաստան-Արցախ ռազմավարական կապերու ամրապնդման եւ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան վերահաստատման համար: Կարճ. ի՞նչ կ'ընենք իրապէ՛ս յաղթելու համար:

Արդար է նման հարցումներ ուղղել միութեան մը կողմէ, որ Արցախեան առաջին եւ երկրորդ պատերազմներուն 12 նահատակներ տուաւ իր շարքերէն: Միութիւն մը, որուն Կեդրոնական Վարչութեան անդամը 1991-ին արի՛ւնը միախառնեց հայրենի Սուրբ հողին:





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Հայկական բանակի դրոշին տակ, բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ խիզախօրէն մասնակցեցան Արցախեան պատերազմներուն: Շատերը հերոսացան, ուրիշներ վիրաւորուեցան, իսկ շատերն ալ հրաշքով փրկուած ըլլալու սուկումը ապրեցան:



Իսկ ինչ իօսք 30 տարի Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ընտանիքին Արցախի ի նպաստ նախաձեռնութիւններուն եւ նիւթական լայն օժանդակութիւններուն մասին, մասնաճիւղ ստեղծելու եւ պահելու հսկայական ճիգերուն մասին:

Այս բոլորէն ետք, այս բոլորին համար, իսկապէ՛ս «Յաղթելու ենք», որպէսզի արժանի դառնանք մեր նահատակներուն, որոնք չապրեցան, որպէսզի մենք ապրինք:

«Յաղթելու ենք», վերատիրանալու համար այն հողին ու հայրենիքին, որուն զաւակներն ենք եւ որուն համար ապրելու եւ եթէ հարկ ըլլայ... մեռնելու պատրաստ են շատերը:

«Յաղթելու ենք», մեր հին ու նոր թշնամիներուն պարտադրելու համար մե՛ր խաղաղութիւնը, մեր ազգային տեսականներուն առաջնորդող քաղաքական մե՛ր կամքն ու վարքագիծը:

«Յաղթելու ենք» նաեւ ու մանաւա՛նդ, որպէսզի ունենանք վերականգնող Արցախ, հզօր Հայաստան եւ ամուր Սփիւռք՝ համահայկական մեր մեծ տեսականներուն հասնելու կամքով ու հաւատքով:

Որպէսզի ունենանք անձնատուական նոր համաձայնութիւններ մերժող հայութիւն, արժանապատիւ իշխանութիւն եւ իսկապէս խաղաղ հայրենիք:

Ու որպէսզի չունենանք նոր պարտութիւններ, նոր կորուստներ եւ նոր զիջումներ, այլ՝ համազգային վերականգնումի մեր ճիգով, ամէն ընկրկումէ ետք մեր մէջ ուժ եւ կարողութիւն գտնելու մեր ջանքով, կարենանք մեր ճակատագիրին անիւր շրջել այնպէս մը, որ ազգովին երաշխաւորենք Արցախի ժողովուրդին անվտանգութիւնն ու ինքնորոշման իրաւունքը, կանխենք Հայաստանի թրքացումն ու տկարացումը, ինքնիշխան, ամուր պետականութեամբ հզօր հայրենիք եւ անպարտելի ժողովուրդ ունենալու արդար ակնկալութեամբ:





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ



Տուն / Լրատու / Այսօր

Հ.Մ.Ը.Մ. ՄԱՍՆԱԿԻՑ՝ ԱՐՑԱԽԻ ԻՆՊԱՍՏ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉՕՐԱՇԱՐԺԻՆ



12 Դեկտեմբեր 2022-էն ի վեր Արցախը ամբողջական շրջափակման մէջ է: Ազերիներ փակած են Հայաստանը Արցախին կապող միակ շնչերակը, որ 120 հազար հայորդիներու սնունդ եւ դեղ կը մատակարարէ, վառելանիւթ եւ կենցաղային պէտքեր կ'ապահովէ, շրջանին տնտեսութիւնը կը պահպանէ: Ազերիներ պարբերաբար կ'ընդհատեն նաեւ Արցախի կազր եւ ելեկտրականութիւնը՝ պատճառ դառնալով որ կրթական հաստատութիւններ իրենց դռները փակեն կամ մասնակի կերպով գործեն:

Կացութիւնը ճգնաժամային է: Հիւանդանոցներ կը տառապին դեղորայքի պակասէ, գործարաններ՝ ելեկտրականութեան չգոյութենէ: Միջազգային իրաւունքի բոլոր օրէնքները եւ մարդկային իրաւանց բոլոր սկզբունքները խախտելով, ազերիներ ճնշումի գանազան միջոցներով կը փորձեն արցախահայութեան քաղաքական կամքը ջլատել եւ զայն վերջնականապէս իրենց ենթարկել:

Ի տես ստեղծուած կացութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը կոչ ուղղած է համահայկական ընդհանուր զօրաշարժի: Քաղաքական կուսակցութիւններ եւ ազգային մարմիններ ձեռնարկած են գանազան նախաձեռնութիւններու՝ միասնական ճիգերով Արցախի շրջափակման վերջ տալու եւ արցախահայութիւնը մարդասիրական աղէտէ մը փրկելու համար: Հ.Մ.Ը.Մ. չի կրնար ձեռնաձայ մնալ այս պայմաններուն մէջ, առ այդ օրուան հրամայականն է՝

- Ա) Առաւելագոյն մասնակցութիւն ունենալ Արցախի ի նպաստ կազմակերպուող գաղութային զօրակցական ձեռնարկներուն:
- Բ) Սկստական հաւարներու, մարզական հանդիպումներու եւ մասնաճիւղային ժողովներու ընթացքին անդրադառնալ Արցախի իրավիճակին եւ միութենական շարքերը օրը-օրին իրազէկ պահել Արցախի կապուած նորութիւններուն:
- Գ) Ընկերային ցանցերով եւ ելեկտրոնային բոլոր հարթակներով ձեռնարկել Արցախի կացութեան եւ արցախահայութեան անմիջական կարիքներուն ներկայացման:

Չօրաշարժի ժամն է բոլորին համար:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Միջին Արեւելքը հարուստ է երկրաշարժը դժնդակ կացութեան մատնած է արդէն իսկ տնտեսական, ընկերային եւ կենցաղային բազմաթիւ տագնապներ դիմագրաւող հալէպահայութիւնը, որ 2011-էն ի վեր կ'անցնի սուրիական պատերազմի ահաւոր փորձութիւններուն ընդմէջէն:

Երկրաշարժը ծանր հարուստ հասցուցած է հալէպահայ հայրենակիցներու անձնական թէ համայնային ինչքերուն: Վնասուած են բնակարաններ, գործատեղիներ, ինքնաշարժներ, եկեղեցիներ եւ դպրոցներ: Չոհուած է երկու հայրենակից:

Ցնցուած է ամբողջ հալէպահայութիւնը: Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը Սուրիոյ իր ներկայացուցիչին եւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան ճամբով մտահոգութեամբ կը հետեւի Հալէպի մէջ տիրող կացութեան:



Կասկած չկայ, որ հալէպահայութիւնը պիտի յաղթահարէ այս փորձութիւնը եւս, սակայն վերականգնելու եւ իր սպիները դարմանելու համար ան կարիքը ունի բոլորիս բարոյական եւ նիւթական աջակցութեան:

Հետեւաբար, Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը աշխարհասփիւռ իր Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն կը թելադրէ անհրաժեշտ դրամահաւարներ կազմակերպել՝ ձեռք երկարելու համար հալէպահայութեան անմիջական կարիքներուն ապահովման:

Հ.Ս.Ը.Ս.ի Սուրիոյ շրջանը ընդհանրապէս եւ Հալէպի Մայր գաղութի մասնաճիւղը յատկապէս, անցնող մէկ դարուն Հ.Ս.Ը.Ս.ի ճամբով շատ բան տուած է միութեան եւ հայութեան: Այսօր, հաւաքական երախտապարտութեան եւ ազգային պարտականութեան կարգով, բոլորիս պարտքն է կանգնիլ հալէպահայութեան կողքին, որպէսզի իր ներկայ ճգնաժամին մէջ ան մնայ կանգուն եւ կենսունակ, կորովի եւ կազմակերպ, Սփիւռքին համար, Հայաստանին համար, բովանդակ հայութեան գերագոյն շահերուն եւ իտէպներուն կենսագործման համար:

Հ.Ս.Ը.Ս.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստատական

Մարզական

ՄԱՐԶԻԿ



Տուն / Լրատու / Այսօր

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՒՐՈՊԱՅԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ



17-19 Մարտ 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության կազմակերպությամբ, Ժամպիլի բանակավայրին մէջ, Փարիզ, տեղի ունեցան միութեան Եւրոպայի խմբապետներու Վկայեալ կարգի երկրորդ եւ երրորդ բաժինները՝ գործնական դասընթացքը եւ անհատական ծրագիրներու ներկայացումը: Առաջին բաժինը՝ տեսական դասընթացքը ընթացք առած էր 22 Մայիս 2022-ին եւ ամիսներ շարունակ կատարուած էր առցանց, իբրեւ դասախօսներ ունենալով Ճադիկ Խիւտավերտեանը, Յակոբ Էմրազեանը, Գէորգ Յակոբճեանը, Սեւակ Թորոսեանը եւ Պօղոս Մահայուպեանը:

Այսպէս, Հինգշաբթի, 16 Մարտին բանակավայր հասան եւ նախապատրաստական աշխատանքներու ձեռնարկեցին դասընթացքի կազմակերպիչ յանձնախումբի անդամները՝ քոյրեր Կարինէ Սիսեռեան (Ֆրանս), Աննա Աւագեան (Լոնտոն), Մենար Պոյաճեան (Միւնիխ) եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գագանճեան:



Երեկոյեան, բանակավայր ժամանեցին դասընթացքին 17 մասնակիցները, որոնք կու գային Փարիզէն (2), Ալմելոյէն (Նետրլիւտներ՝ 3), Վիեննայէն (Աւստրիա՝ 2), Երուսաղէմէն (3) եւ Սոտերթելիայէն (Շուէտ՝ 7):

Դասընթացքը ընթացք առաւ Ուրբաթ, 17 Մարտին եւ երկարեցաւ մինչեւ Կիրակի, 19 Մարտ: Մասնակիցները խմբակներու բաժնուած՝ քննեցին միութեանական, սկստատական եւ ազգային 12 նիւթեր: Իւրաքանչիւր խմբակ իր նիւթին քննարկումէն ետք՝ համադրուած կարծիքները ներկայացուց մասնակիցներու ընդհանուր կազմին: Աւարտին, դասընթացքին մասնակիցները ստացան Վկայեալ կարգի իրենց պէճերը եւ վկայականները:

Յայտնենք, որ հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Մեկուսի վարչութիւնը մեծ դեր ունեցաւ դասընթացքի գումակային (logistic) եւ գործնական աշխատանքներու յաջողութեան մէջ:

Ծանօթ: Օրուայ միջոցառման մասնակցեցան միութեանս սկստատական խմբապետական կազմէն քոյր Արաքսի Խաչատուրեան , քոյր Մարգրիտ Կորկիսեան եւ եղբայր Ռազմիկ Արամեան. Որոնք յաջողութեամբ աւարտեցին դասընթացքները եւ արժանացան Հ.Մ.Ը.Մ. Վկայեալ կարգի շքանշաններ եւ վկայագիրներ:



Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկանտական

Մարզական

ՄԱՐԻԿ



Տուն / Լրատու / Այսօր

Լուսանկարներ «Հ.Ս.Ը.Ս.Ի ԵՐՐՈՊԱՅԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԿԱՅԵԱԿ ԿԱՐԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԲ»ի միջոցառումներ



Երոպայի Վկայեալ Կարգի
Գործնական Սեմինար
2022 - 2023





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միութիւն

Միութիւն

Պատմական

Լրատու

Սկստակական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

«ՀԱՅ ՄԿԱՈՒՏԻ ՕՐ»Ը ԱՐՑԱԽԻ ՄԿԱՈՒՏՆԵՐՈՎ



2023-ի «Հայ սկստուտի օր»ը Հ.Մ.Ը.Մ. կը նշէ աւելի քան երկու ամիսէ ի վեր շրջափակման մէջ գտնուող Արցախի սկստուտներուն հետ:

Այս առիթով եւ Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին մտայղացումով, Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի սկստուտները կը ներկայացնեն սկստուտական դասանանքը ծանօթացնող կարճ տեսանիւթ մը, որուն բնագիրին հեղինակը, դերասաններն ու բեմադրիչը նոյնինքն Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի սկստուտներն են:



Արցախեան բարբառով՝ «Շատ շնորհաւոր ինի հայ սկստուտին օր»ը:

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ական
12-րդ Բանակում
« Գառնիկ Մկրտիչեան » բանակավայր
Բիւրական - Հայաստան

21 -30 Յուլիս 2023



Միություն Պատմական Լրատու Սկսուտական Մարզական **ՄԱՐԶԻԿ**

Տուն / Լրատու / Այսօր

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՄԱՐԶԻԿ


42-րդ տարի, Թիւ 427

- Իսմբագրական- Ի՞նչ կ'ընենք... (Իրապէ՛ս յաղթելու համար).
- Միջ-դիւանական 10-րդ խորհրդածողովի բացման պաշտօնական հանդիսութիւնը.
- Կազմակերպական եւ գաղափարական ուժի մեր աղբիւրներուն պէտք է գուրգուրալ ամէն գնով, կարելի բոլոր միջոցներով- Վաչէ Նանարեան.
- Միջ-դիւանական 10-րդ խորհրդածողովը շեշտեց միութենական բնականոն կեանքի վերադարձի հրամայականը.
- Սկսուտական Երկաստղ, Ա. կարգ եւ Բ. կարգ գիրքերու վերամշակուած օրինակները՝ պատրաստ.
- Վկայութիւններ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի փառաւոր անցեալէն (Ա.)- Ճորճիկ Ռաստկելէնեան.
- Իսաժակ Տիւլպերեանի յիշատակին- Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւն.
- Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի մը անժամանակ կորուստը- Արմէն Բէօշկերեան.
- Իսմբապետս՝ Ժիրայր Սարգիսեան- Յարուք Չէքիճեան.
- Մեր Ժիրայրն ալ անդարձ գնաց- Սերոբ Սահակեան.
- Անշահախնդիր ու վեհանձն Հ.Մ.Ը.Մ.ականը (Ներսէս Ճուպանեանի յիշատակին)- Բաֆֆի Կէվոզյանեան.
- Թիւր կ'ընդգրկէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ (Արցախ, Հայաստան, Ֆրանսա, Շուէտ, Հոլանտա, Պուլկարիա, Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներ, Գանատա, Սուրիա, Յորդանան): 80 էջ:



Համագործակցությամբ Հոլանդացի Հ.Օ.Մ. Շուշի Մասնաճիւղի հետ
միութիւնս կազմակերպեց դրամահաւաքի միջոցառումներ

ՕԳՆԷ ԵՂԲՕՐՐ




Երկրաշարժէն տուժած մեր հայրենակիցներուն
օգնութեան գործով, միութիւններուն եւ
եկեղեցւոյ կողմէ կազմուած է միասնական
յանձնախումբ մը:



«Valentine»

11 Փետրուար 2023 Թ.ին «Valentine» տօնի առթիւ միութեանս սրահին մէջ կազմակերպուեցաւ ընտանեկան պարահանդէս . որուն հասոյթը նուիրուեցաւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած երկրաշարժի տուժուած հայրենակիցներուն :



Bingo Carnaval & Michink
Voor jong en oud

Leuke prijzen voor de drie best gekleden

16:30 11 2023
Maart

Maalijd : Falafel
Locatie : Homenetmen Almelo (Vrej Chatalian zaal)
Adres : Burgemeester schneiderssingel 21, 7602RK Almelo





Տեսախաղերու « PlayStation » մրցաշար



Միութեանս ընկերային յանձնախումբի կազմակերպութեամբ եւ 32 մրցակիցներու մասնակցութեամբ . 4 Փետրուար 2023 Թ.ին միութեանս սրահին մէջ , տեղի ունեցաւ տեսախաղերու «PlayStation» մրցաշար: Մրցաշարը աւարտուեցաւ Եղբ. Աւագ Յակոբեան երորդ կարգ ստանալով եւ երկրորդութիւնը Եղբ. Խաչիկ Յակոբեան իսկ առաջնութիւնը ստացաւ Եղբ. Ալեքս Մաքրիդեան :



Հայ Սկաուտի օր Ալմեյո-ի մէջ



Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո Մեկուսի Շրջանի սկաուտական խորհուրդի եւ խմբապետական կազմի . Ալմեյո-ի Հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեանի , Հ.Յ.Դ. Արամ Մանուկեան կոմիտէութեան , Հ.Յ.Դ. Գարեգին Նժդեհի , Հ.Օ.Մ.ի , Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ.եան եւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի վարչութեան ներկայացուցիչներու ներկայութեամբ : Միութեանս նորակառոյց կեդրոնի Վրէժ Չաթալեան սրահին մէջ , Կիրակի 26 Փետրուար 2023 Թ.ին տեղի ունեցաւ Հայ Սկաուտի օրուայ նուիրուած շքեղ տօնակատարութիւն:

Յայտագիրը սկիզբ առաւ հետաքրքիր կենդանի պատկերով ուր ներկայացուեցաւ Սկաուտի աստիճանաւորական «մոկի-էն սկսեալ մինչեւ երէցի Արարատեան կարգի աստիճանաւորի» կեանքի ընթացքը Հ.Մ.Ը.Մ. ին մէջ: Դերակատարութեան աւարտին տեղու ունեցաւ սկաուտական խումերու մուտքը Միութեանս Վ. Չաթալեան սրահը ուր խմբերը կեդրոնանալէ ետք տեղի ունեցաւ Յատազ նահատակով եւ սկաուտական Ով Հայ Արի քայլերգով դրօշակի բարձրացման արարողութիւնները:



Բեմ հրաւիրուեցաւ Եդր. Սեւան Կորկիսեան « միութեանս սկաուտական խորհուրդի պատասխանատուն» օրուայ տօնակատարութեան բացման խօսքը կատարելու : Եդր. Կորկիսեանը ներկաներուն ողջունելէ ետք իր ուղերձը սկիզբ արաւ յայտնելով թէ « այսօր Ալմեյո քաղաքին մէջ , միութեանս սկաուտները մօտ 10 տարիներ եւ առաւել կը տօնեն Հայ սկաուտին օրը , եւ այդ տօնակատարութիւնները կնշանակեն թէ միութեանս սկաուտները կարողացած են Հ.Մ.Ը.Մ.ի Տիպար քաղաքացի պատրաստելու ծրագիրը եւ սկաուտական բարիք կատարել ամէն օրուայ դաւանանք բառերը գործնականի թարգմանած են » շարունակելով « սկաուտները իրենց հերթական հաւաքոյթներուն ընթացքին ստանալու են կրօնական եւ ազգային դասընթացքներ» : Եդրայրը իր ուղերձին եւս յայտնեց թէ « Միութեանս Կեդրոնական Վարչութեան որոշումով Հայ սկաուտին օրուայ տօնակատարութիւնները տեղի կունենան փետրուար ամսուայ մէջ զուգադիպ-

ուելով Վարդանանց տօնի հետ , ուր երկու տօներու մղուած պայքարներն ալ ուղղակիօրէն կապ ունին հայ ժողովուրդի ինքնութեան եւ գոյատեւման հարցերով » :Երբ. Կորկիսեանը իր խօսքը աւարտեց շնորհակալութեան խօսք ուղղելով սկաուտներուն , իրենց ընտանիքներուն , ներկաներուն եւ բոլոր անոնց որոնք կ'օժանդակեն սկաուտական աշխատանքները ընդհանրապէս Հոյանտայէն եւ մասնաւորապէս Ալմէյօ քաղաքին մէջ:



Բացման խօսքի աւարտին տեղի ունեցաւ սկաուտական աստիճանաւորական տուչութիւն եւ սկաուտական կարգերու վկայականներու բաշխում :

Աւարտին ժամանակն էր բոլոր ներկաները վայելելու միութեանս Գայիկ եւ Արծուիկ ներու կողմէ պատրաստուած շարք մը հայրենասիրական երգերով եւ արտասանութիւններով:



Հանելի երգերու եւ արտասանութիւններու աւարտին , ընմ հրաւիրուեցաւ միութեանն ատենապետ Եղբ. Մասիս Վահանեան վարչութեան իօսք փոխանցելու: Եղբ. Ատենապետը ներկաներուն ողջունելէ ետք , իր ուղերձով ներկաներուն յայտնեց թէ « Հայ սկաուտի կեանքին մէջ իւրայատուկ տեղ կը գրաւէ Հայ Սկաուտին Օրը . Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները ազատատենչ ոգիով ներշնչուած Վարդանանքի սերունդներն են , ուր Վարդանանքը յայտարարած են Հայ Սկաուտի Օր. Այս օրը նրանց համար ոչ միայն դարձած է հպարտութեան եւ ուրախութեան օր, այլ յիշատակի , խոստումի եւ ուխտ վերանորոգելու օր»: Եղբ. Ատենապետը նշեց իր իօսքին մէջ թէ « Այսօր պատմական Աւարայրի ճակատա-



մարտը կրկնուելու է այլ տարբերակով » շարունակելով միութեանն սկաուտական առաքելութեան մասին նա յայտնեց « Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը իր տարբեր բաժանումներով կհանդիսանայ մատղաշ մանուկներու համախմբող հոգատար տուն , ուր նոր սերունդները կը կերտուին հայրենասիրական , ազգասիրական եւ հայացի դաստիարակութեամբ: Սկաուտութիւնը ասպետութիւն է , որովհետեւ սկաուտին մէջ կսերմանուի որպէս հայրենիքի եւ մարդկութեան համար եղբայրութեան , անձնուրացութեան անսպառ ուժի եւ ծառայութեան ոգին » : Եղբ. Վահանեանը իր իօսքը աւարտեց շնորհաւորանքի եւ շնորհակալութեան իօսք յայտնելով բոլոր Հ.Մ.Ը.Մ. ական սկաուտներուն , Ընտանիքներուն եւ միութեանն համակիրներուն:



Ատենապետի խօսքը աւարտին Սկաուտները ներկաներուն ցուցադրեցին նախապէս պատրաստուած » նախորդ երկօրեայ սկաուտներու տարած բարեխնամ եւ Ալմելո-ի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ տարած աշխատանքներու տեսանիւթ:



Յայտագրի աւարտի Ալմելո-ի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգևոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեան փոխանցեց ներկաներուն իր սրտին խօսքը յայտնելով « Այսօր այս տեղ հաւարուած Հ.Մ.Ը.Մ.ի նորակառոյց շէնքը տարիներ առաջ երազանք եւ տեսիլք էր Ալմելո Քաղաքի մէջ նախորդ Հ.Մ.Ը.Մ.ականներուն որն այսօր իրականացաւ : Ես ալ իմ երազանքս կամ տեսիլքս ունիմ որը յոյսով եմ ի պատիւ ներկայ խմբապետներուն եւ վարիչ կազմերուն այս նորանոր Գայիկ եւ Արծուիկները շարունակելու եւ այս վսեմ պայքարը եւ այս կեդրոնէն ներս ներկայութիւնը կրկնապատիկ շատանալու եւ »: Աւարտին ըստ աւանդութեան ոսպէ սպորի օրհնութեամբ աւարտուեցաւ յայտագիրը:





Սրահի ոտնագնդակի մրցաշար
2022-23 Թ.ի Տարեշրջանի վերջին եռամսեայ KNVB ֆութբոլի շրջանային
մրցաշարերու արդիւնքները .-

Ա.Հ.Մ.Ը.Մ. 1 (Homenetmen 1) Կը մրցակցի 2րդ բաժանում աստիճանի խումբերու հետ .

- Homenetmen 1 vs Sparta 2 - 7
- Homenetmen 1 vs Juventa 3 - 5
- Homenetmen 1 vs Zalvo 5 - 3
- Homenetmen 1 vs Tegenpartij 3 - 8
- Homenetmen 1 vs Heracles 9 - 2
- Homenetmen 1 vs ZVO 7 - 2
- Homenetmen 1 vs Gamberg 6 - 8





Բ. Հ.Մ.Ը.Մ. 2 (Homentmen 2) Կը մրցակցի 4րդ բաժանում աստիճանի խումբերու հետ

| | | | |
|---------------------------|-------|---------------------------|-------|
| -Homentmen 2 vs Heracles | 1 - 3 | -Homentmen 2 vs Ebz | 1-5 |
| -Homentmen 2 vs Excelsior | 0 - 3 | -Homentmen 2 vs EBz | 2 - 7 |
| -Homentmen 2 vs EBZ | 2 - 1 | -Homentmen 2 vs Excelsior | 3 - 2 |
| -Homentmen 2 vs Heracles | | 2 - 0 | |



ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐ-եր

Միությանն մարզական յանձնախումբը կազմակերպեց 23 փետրուարին ՊԱՍԲԻ ԲՕԼԻ , 2 Մարտին ՎԵՐԻ ԲՕԼԻ եւ 23 Մարտին սրահի ՈՏՆԱԳՆԴԱԿԻ մրցաշարեր :



DE SPORTCOMMISSIE VAN HOMENETMEN ALMELO ORGANISEERT:

SPORTDAGEN

BASKETBAL (JONGENS & MEISJES)
DATUM: 23-02

VOLLEYBAL (JONGENS & MEISJES)
DATUM: 02-03

VOETBAL (VANAF 30 JAAR)
DATUM: 23-03

🕒 19:30 UUR

📍 HOMENETMEN ALMELO (BURGEMEESTER SCHNEIDERSINGEL 21, 7602RK)

Միությունս մարզական յանձնախումբը կ'կազմակերպէ եւս
նոր մարզական մրցաշարեր
ըստ ստորև ներկայացուած յայտարարութեան համաձայն



Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo

SPORTDAGEN



VOLLEYBAL

JONGENS & MEISJES

30-03-2023



KINDERVOETBAL

**JONGENS & MEISJES
6 T/M 13 JAAR**

06-04-2023



BASKETBAL

JONGENS & MEISJES

13-04-2023



VOETBAL

MANNEN VANAF 30 JAAR

20-04-2023



**HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSSELINGEL 21, 7602 RK**



19:30 UUR



MELD JE AAN VIA 0619000833 !

Ս. Շենդեան տօնի առթիւ Ընտանեկան պարահանդէսի լուսանկարներ





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ⇒ Իմըագրական «Մարզիկ»ի թիւ 427 .ԲՆՉ Կ՝ՐՆԵՆՔ... (Իրապէ՛ս յաղթելու համար)
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.Մասնակից Արցախի ի նպաստ համահայկական ընդհանուր զօրաշարժին.
- ⇒ Հաղորդագրութիւն.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. ի Եւրոպայի խմբապետներու Վկայեալ կարգի գործնական դասընթացը.
- ⇒ Հայ Սկաուտի Օր -ը Արցախի Սկաուտներով.
- ⇒ Լոյս տեսաւ Մարզիկ 42-րդ տարի , Թիւ 427.
- ⇒ Դրամահաւաք.
- ⇒ Valentine
- ⇒ Bingo , Carnival & Michink .
- ⇒ Տեսախաղերու « PlayStation » մրցաշար .
- ⇒ Հայ Սկաուտի Օր Ալնէյօ-ի մէջ.
- ⇒ Սրահի ոտնագնդակի մրցաշարի արդիւնքները.
- ⇒ Մարզական մրցաշարերու յայտարարութեան ցուցակ.
- ⇒ Ս. Ծննդեան պարահանդէսի , լուսանկարներ.
- ⇒ Together we build the future .
- ⇒ Բովանդակութիւն .

Հասցէ : Burgemeester Schneiderssingel 21 , 7602 RK - Almelo
Կայք էջ . Website : homenetmenalmelo@yahoo.nl
: <https://stichtinghomenetmen.nl/>
Facebook : Homenetmen Almelo / ՀՄԸՄ Ալլմէյօ
Instagram : [homenetmenalmelo](https://www.instagram.com/homenetmenalmelo)

Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել (homenetmenalmelo@yahoo.nl) -